

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրենք 1976 եւ 1977 տարիներու ընդացքին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբավայրերու տրուած հետեւեալ բարեպաշտական նուէրները :

1976

1. Բնիկ Այնթապցի, Տիկին Ազնի Պիլէնճեան, Լօս Անճէլօսարնակ, կը նուիրէ Թաւշեայ խորքով փուլերով եւ ուլունքներով գործուած քորփուրա մը Ս. Յակոբայ Տաճարին :

2. Տիկին Սիրլա Փիրայր Վարդանեան, Թեհրանարնակ, կը նուիրէ Խուրթէն փոքր գորգ մը եւ սոկեայ փոքր խաչ մը Ս. Աստուածածնայ պատկերին :

3. Կ. Պոլաէն Տիկին Երջանիկ Սահակեան կը նուիրէ քորփուրա մը եւ պատուանց մը խունկ Ս. Յակոբայ Տաճարին, բարեկամ զոյղի մը միջոցաւ :

4. Օր. Աննա Չափատարեան կը նուիրէ դեղին յատակի վրայ գործուած սկիհի ծածկոց մը, Հրեշտակներով եւ խաչերով զարդարուած, Ռուս մայրապետներէ գործուած :

5. Տիկին Սրժակիւյ Նազրրեան, վանքարնակ, բնիկ Հաճընցի, կը նուիրէ ծածկոց մը, ընտիր գործ պարսկական սպաճոյ, Քրիստոսի Ս. Գերեզմանին : Յանձնեալ Ս. Յարութեան Տեսուչ Հօգչ. Տ. Վաղարշ Վրդ. Խոստատարեանին :

6. Նոյնը՝ դարձեալ կը նուիրէ Ս. Յակոբայ Մայր Տաճարին կարմիր յատակով սպաճոյ եւ դեղին ծոպերով երկու քորփուրա, եւ ասեղնապորձ բայխտակ յատակով եւ դեղին ծոպերով երկու քորփուրա եւս :

1977

1. Տիկին Կիւլիանէ Ալեքսանեան, վանքարնակ, կը նուիրէ Ս. Յակոբայ Մայր Տաճարին ժամբարբի կտաւահիւս շապիկ մը, զոյղ մը բազպան, անձեռոց մը եւ չորս ծաղկաւոր ուրարներ, իւրապատուի յիշատակարանով :

2. Թեհրանարնակ Օր. Լինտա Մինասեան կը նուիրէ ասեղնապորձ սպիտակ յատակով քորփուրա մը Ս. Յակոբայ Տաճարին :

3. Երուսաղէմարնակ բնիկ Եղեսպցի Տիկ. Ալիս Խարմանտարեան կը նուիրէ խնդրակատար Ս. Յակոբայ Աջակողմեան եւ Չախակողմեան Ս. Աստուածածիններու պատկերներուն չորս պղնձեայ սոկեզօծ կանթեղներ :

4. Տիկին Եղիսարէթ Նորաւեան, Թեհրանարնակ, «ի յիշատակ Հոգւոցն Հանդուցերոց Յովհաննու եւ Էմէլի Նորաւեանց», կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարին վայելեայ փորապարուած ալիս մը սոկեզօյն ներկուած, իտալական գործ :

ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊԵՍԿՈՊՈՍ

Լուսաբարակետ Ս. Արտաշ